

Ժամկոչի բնակարան է հիմա, ու ոստիկանութիւնը վարձքով կը նստի աղգային ուրիշ կալուածի մը մէջ:

Եաշը աւերա՛կ, այն փառաւոր Եաշը...:

Պաքովի հին դպրոցին տեղը հիմա տէրտէրն ալ չիտէ...:

Ֆօքշանի մէջ աղջկանց ու մանչերու զըպրոցներուն երկու փառաւոր շէնքերը դէմ դեմաց իրար կը հեգնեն:

Թրկօ-Օքնայի մէջ հետքն իսկ չկայ զըպրոցին:

Եղիսաբէթուպոլիսը՝ ամայի, ծուռ կը նայի Մխիթարեաններուն, որոնք զինք փոշիներուն լքեցին:

Սթրունկան, ուր քանի մը տարի շնչեց ուսմանահայ որբանոցը, պանդոկ է հիմա, ու Նահատակաց մատուռը, զոր օր մը այնքան սիրով օժեցինք բլուրի մը կատարը, կուլա՛յ միտնակ...:

Այս պատկերն ալ պէտք էր որ տայի ուսմանահայ դաղութին կեանքը պատմած առնն: Կրթական շարժումը պատմողը պարտաւոր էր այս ողբն ալ ընէր...:

* * *


Ռուսմանահայ դաղութին կեանք ներարկելու բոլոր փորձերը, սակայն, դատապարտուած են ուշ կամ կանուխ մարելու:

Գաղութը կը քամուի, կը հատնի ներսէն:

Հեղեղն է, որ կուգայ տաշեղները առնել տանելու: Ընդունայն են թումբի այս փխրուն կտորները՝ խուժող ալիքներուն դէմ:

Դպրոցները, թերեւս, կարենան պահ մը կասեցնել հեղեղը, բայց անոնք պիտի չկրնան սերունդները իրարու կապել:

Գաղութի մը մէջ, որ 600 տարի դիմադրեր է, յիսուն տարուան իսկ կեանք չունինք:



ՔԻՒՐՏԵՐՈՒ ԵՒ ՀԱՅԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՈՒ ՓՈՒԼԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Գրեց՝ Կ. ՍԱՍՈՒՆԻ

ԳՂՈՒՆ ԵՐԿՐՈՐԳ

I

16-րդ դարասկզբէն ասդին, ինչպէս տեսանք նախորդ գլուխին մէջ, քրտական իշխանապետութիւնները հաւաքական ճիգ մը չըրին բացարձակ անկախութիւն մը ձեռք բերելու, պետութիւն դառնալու նպատակով, ինչպէս կը բաղձար քիւրտ աղգային բանաստեղծը, թէև՝ այդ իշխանապետութիւնները իրենց անջատ, կէս-անկախ գոյութեան պահպանման համար միշտ ըմբոստ տարր մը մնացի, թրքական տիրապետութիւնը անուանական դարձնելու աստիճան:

Հայերն ու քիւրտերը (մէկի տկարութեան, միւսի պառակտման եւ երկուքի անդիտակցութեան հետեւանքով) քաղաքական համաձայնութեան մը չյանդեցան երեք երկար դարերու ընթացքին, եւ պատեհ առիթներէն չօգտուե-

ցան՝ ազատագրական միացեալ շարժման մը համար:

Պատմական նշանակութիւն ունեցող քաղաքական փոխյարաբերութիւններու բացակայութիւնը, արգելք մը չէր, սակայն, որ հայերն ու քիւրտերը ամենօրեայ շփման մէջ ըլլային, նախ՝ որպէս դրացիներու (տեղական բնիկներու) եւ յետոյ՝ որպէս հպատակ տարր (հայր քիւրտին հպատակ): Այս փոխյարաբերութիւնները ճակատագրական նշանակութիւն ունեցան երկու ազդերու համար ալ: Որպէսզի մեզի պարզ երեւնայ 19-րդ դարու վերջին կէսի (1850-1900) հայ-քրտական յարաբերութիւններու ծայրայեղ սրումը, մենք քննութեան պէտք է առնենք 19-րդ դարը նախորդող երեք հարիւր տարուան ներքին դէպքերը:

Այս քննութիւնը անհրաժեշտ է նաեւ այն պատճառով, որ բացատրուի հայոց դիրքը